ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-25/9 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով համացանցային էջերի հոսթինգի ծառայության գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 25.12.2024թ. ժամը 12:00-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

**Գնահատող հանձնաժողովի կազմը.**

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Արա Խաչատրյան

Մարինե Բաղդասարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Խառատյան

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. Հասցեները |
|---|---|---|
| 1 | «ՋԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ | info@gdesigngroup.net, 093 078807 |

**3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3. 1 «ՋԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝

| Չ/ր | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները |
|---|---|---|
| | | «ՋԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ |
| | | Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ |

| | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն |
|---|---|---|---|
| 1 | 180000 | 177700 | 177700 |

**5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, սահմանված պայմաններին համապատասխանության մասին.**

- 5.1 **«ՋԻ ԴԻՋԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից** ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես բացակայում է հավելված 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղումը, ինչպես նաև հավելված 1 դիմում-հայտարարությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես մասնակցության իրավունքի պահանջները լրացված են թերի ՝ բացակայում է մասնակցի փոխկապակցված անձանց մասնակցության իրավունքի պահանջներին բավարարելու վերաբերյալ հավաստումը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**6. Գնահատման գործընթացի կասեցման մասին.**

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«ՋԻ ԴԻՋԱՅՆ» ՍՊԸ**–ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 5.1 կետով արձանագրված անհամապատասխանությունը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

6.2 Հանձնաժողովի նիստը շարունակել **«ՋԻ ԴԻՋԱՅՆ» ՍՊԸ** –ի կողմից անհամապատասխանությունը շտկելուց հետո՝ ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 26.12.2024թ.**

**7. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին**

**7.1** Էլեկտրոնային աճուրդով համացանցային էջերի հոսթինգի ծառայության գնման գործընթացը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարությունից 26.12.2024թ ստացված թիվ Մ-92503-2024 2 գրությունը, համաձայն որի 24/12/2024թ. ժամը 11:00-ից մինչև 12:25-ն և ժամը 13:58-ից մինչև 14:15-ն ընկած ժամանակահատվածում ինտերնետային կապի խափանման և դրա արդյունքում էլեկտրոնային աճուրդների համակարգի աշխատանքի գերծանրաբեռնվածությամբ պայմանավորված համակարգը եղել է անհասանելի ինչի արդյունքում խոչընդոտվել է ինչպես վերը նշված ժամանակահատվածում անցկացվելիք աճուրդների, այնպես էլ նույն ժամանակահատվածում ընթացակարգերին մասնակցելու նպատակով հայտերի ներկայացման ընթացքը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0*

7.2 Հաստատել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն գնումների տեղեկագրում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0*

Գնահատող հանձնաժողով՝

---------------------------- Հրանտ Մկրտչյան /նախագահ/

---------------------------- Արա Խաչատրյան

---------------------------- Մարինե Բաղդասարյան

---------------------------- Լիանա Խառատյան /քարտուղար/